



YEREVAN  
STATE  
UNIVERSITY



The U.S. Embassy in Armenia

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ «ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (AMERICAN STUDIES) ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՂ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Ամերիկյան հետազոտություններ» (American Studies) դրամաշնորհային ծրագրի շրջանակում հայտարարում է ԵՊՀ Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի հետազոտողների մրցույթ:

#### Մրցույթի նպատակներն են՝

- Համախմբել ամերիկագիտության կամ հարակից բնագավառների գիտահետազոտական ներուժը,
  - Ձևավորել ու զարգացնել համապատասխան գիտական միջավայր և խթանել ամերիկագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:
- Մրցույթին մասնակցելու համար հրավիրվում են ամերիկագիտության կամ հարակից ակադեմիական գիտակարգերի բնագավառում գիտահետազոտական հետաքրքրություններ և փորձ ունեցող անձինք:

#### Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներն են.

- Առնվազն հինգ տարվա գիտահետազոտական փորձառություն՝ ամերիկագիտության կամ հարակից բնագավառներում,
- Գիտական աստիճան՝ հասարակական գիտությունների ոլորտում,
- Միջազգային ակադեմիական հետազոտական փորձառությունը կդիտվի որպես առավելություն:

#### Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- ինքնակենսագրական (CV),
- գիտական հետաքրքրությունների շրջանակի (Statement of Interests) նկարագրություն՝ 2 - 3 էջի սահմանում,
- ամերիկագիտության կամ հարակից ակադեմիական գիտակարգերի բնագավառին վերաբերող գիտական մեկ հոդվածի (կամ համապատասխան տեքստային հատվածի) օրինակ,

• հետազոտական առաջարկ (Research Proposal)՝ առավելագույնը 1500 բառի սահմաններում՝ առաջարկված թեմատիկաներից որևէ մեկի վերաբերյալ (անգլերեն լեզվով)։

1. ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականությունը և գործընթացները/ U.S. Regional Policies and Processes/
2. ՀՀ-ԱՄՆ. համագործակցության ռազմավարությունները, ձևաչափերը և հայկական սփյուռքի դերը / United States and Armenia: Cooperation Frameworks, Strategies and the Role of Armenian Diaspora/
3. ԱՄՆ քաղաքականությունը Հարավային Կովկասում / U.S. Policies in the South Caucasus/
4. Թուրքիա – ԱՄՆ հարաբերություններ / United States -Turkey Relations/
5. ԱՄՆ էներգետիկ քաղաքականությունը. տարածաշրջանային մոտեցումներ /U.S. Energy Policies: Regional Dimensions/
6. ԱՄՆ միգրացիոն քաղաքականությունը. Միտումներ և առանձնահատկություններ /U.S. Immigration Policy: Policy Trends and Specifics/

ԵՊՀ Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի թեմատիկ հետազոտողներից ակնկալվող աշխատանքային արդյունքները, ի թիվս այլնի ներառելու է գրախոսվող ակադեմիական հրապարակում՝ հոդվածներ միջազգային պարբերականներում և «Բանբեր Երևանի Համալսարանի» գիտական հանդեսում: Միաժամանակ հետազոտողները պայմանագրի գործողության ժամկետում հանդես կգան սեմինարներկայացումների շարքով:

Մրցութային ընտրությունն իրականացվելու է ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում: Ըստ անհրաժեշտության կարող է անց կացվել նաև հարցազրույց:

Մրցութի արդյունքում ընտրված դիմորդների հետ կնքվելու է պայմանագիր՝ վեց ամիս ժամկետով (երկարաձգման հնարավորությամբ):

Մրցութին մասնակցելու դիմում-հայտերն անհրաժեշտ է ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ «Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի ղեկավար, պրոֆ. Ալ. Մարգարովի՝ [amarkarov@ysu.am](mailto:amarkarov@ysu.am), և «Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի համակարգող, ԵՊՀ Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն, դոցենտ Վ. Ագլյանի՝ [aglyan@gmail.com](mailto:aglyan@gmail.com) էլեկտրոնային փոստի հասցեներին:

Մրցութին մասնակցելու դիմումների ընդունման վերջնաժամկետը **2021 թ. մարտի 22-ն է:**